# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԿԲԱԿ-ԳՀԾՁԲ-25/3

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ կարիքների համար համակարգիչների և այլ սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԲԱԿ-ԳՀԾՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1 Տեխնիկական բնութագրի փոփոխություն**

**Փոփոխության նկարագրություն.** Հրավերի տեխնիկական մասի փոփոխություն:

<<Համակարգիչների տեխնիկական սպասարկման ծառայությունները իր մեջ ներառում է համակարգիչների ֆիզիկական և ծրագրային տեխնիկական սպասարկում, այդ թվում նաև ցանցային միացումների տեխնիկական սպասարկում, ներքին ցանցի անվտանգության ապահովում, հեռախոսային, համակարգչային և այլ սարքավորումների միացումների, կարգավորումների ապահովում և սպասարկում, տեխնիկական մասով ցանցային անվտանգություն վերահսկում, ապահովում և ոլորտում ծրագրային կարգավորումների ապահովում ու աջակցում, ՀԱՊՀ ՏՀՏԷ ինստիտուտի SS ֆակուլտետի առնվազն 2-րդ կուրսի ուսանող, ՀՀ պարտադիիր զինվորական ծառայություն անցած: Աշխատանքային պայմանները՝ աշխատանքային ժամերը յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 13:00-ից մինչև 16:48, ըստ անհրաժեշտության ՓԲԸ-ի կողմից կանչի դեպքում ներկայանալ անհապաղ>>:

Մասնավորապես՝ հրավերի տեխնիկական մասի փոփոխություն և լրացում

<< **Համակարգիչների և այլ սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունները՝**

1. **Համակարգիչների և այլ սարքավորումների տեխնիկական վիճակի պարբերական ստուգում**
   *1.1.* Օպերացիոն համակարգերի տեղադրում, կարգավորում և թարմացում
   *1.2.* Ծրագրային խափանման, սխալների հայտնաբերում և վերացում
2. **Ցանցային միացումների տեխնիկական սպասարկում**
   *2.1.* Ներքին ցանցի անխափան աշխատանքի ապահովում
   *2.2.* Ցանցային սարքավորումների (switch, router, access point) կարգավորում
   *2.3.* LAN/Wi-Fi կապերի ապահովում, խափանումների վերացում
3. **Ներքին ցանցի անվտանգության ապահովում**
   *3.1.* Ցանցային անվտանգության ռիսկերի գնահատում և վերահսկում
   *3.2.* Ֆայրոուլների, հակավիրուսային և պաշտպանական համակարգերի կառավարում
   *3.3.* Մուտքի իրավունքների և տվյալների պաշտպանվածության ապահովում
4. **Հեռախոսային, համակարգչային և այլ սարքավորումների միացումների ու կարգավորումների ապահովում**
   *4.1.* IP հեռախոսիայի, ներքին հեռախոսային ցանցի սպասարկում
   *4.2.* Տպիչների, սկաների, POS սարքերի և բժշկական էլեկտրոնային սարքավորումների միացում և աջակցում
   *4.3.* Սարքավորումների տեխնիկական անսարքությունների արագ հայտնաբերում և վերացում
5. **Ծրագրային կարգավորումների ապահովում և աջակցում**
   *5.1.* Տեղեկատվական համակարգերի՝ ներառյալ բժշկական ինֆորմացիոն համակարգերի (MIS/EMR) աշխատանքային աջակցում
   *5.2.* Ծրագրերի տեղադրում, կարգավորում և արդիականացում
   *5.3.* Աշխատակիցներին ծրագրային խորհրդատվություն և օպերատիվ աջակցություն

**Կրթություն և ընդհանուր պահանջներ**

1. **ՀԱՊՀ ՏՀՏԷ ինստիտուտի ՏՏ ֆակուլտետի առնվազն 2-րդ կուրսի ուսանող**
2. **ՀՀ պարտադիր զինվորական ծառայություն անցած**
3. Պատասխանատու, կարգապահ, գաղտնիության կանոնները պահող
4. Թիմում աշխատելու և արագ կողմնորոշվելու կարողություն

**Փոփոխության հիմնավորում 08.12.2025թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 2՛ արձանագրություն:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԿԲԱԿ-ԳՀԾՁԲ-25/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Սիրանուշ Ոփյանին:

**Հեռախոս՝ 012 272727 /107 ներքին/**

**Էլեկտրանային փոստ՝ ncat.gnumner@gmail.com:**

**ԿԲԱԿ-ԳՀԾՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը**